ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 21-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի համաքաղաքացիներ

Ստեփանակերտի քաղաքապետարանի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ ԼՂՀ անկախության 21-րդ տարեդարձի, ինչպես նաև սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ:

Այսօր, հիրավի, մենք հպարտանալու առիթ ունենք, քանզի արցախյան ազգային-ազատագրական պայքարի փառավոր էջերը լի են պատմական հաղթանակներով ու ձեռքբերումներով: Եվ բնականաբար, մեզնից յուրաքանչյուրը քաջ գիտակցում է այն իրողությունը, որ ազատությունն ու անկախությունը ճակատագրի շնորհած նվեր չէ ու այն ձեռք է բերվել մեծ զոհողությունների գնով: Հազարավոր հայորդիներ ու դստրեր իրենց կյանքը զոհաբերեցին հանուն հայրենիքի, հանուն ազատ ու անկախ Արցախի՝ այն համոզմամբ, որ վերջ կտրվի Ադրբեջանի բռնատիրությանը և մեզ կվիճակվի ինքնուրույն տնօրինելու սեփական ճակատագիրը: Փառք արցախյան ազատամարտում նահատակվածներին:

Արդեն 21 տարի է, ինչ կերտում ենք մեր անկախությունը, մեր երկրի ապագան: ԼՂՀ իշխանությունների, Հայաստանի, աշխարհի համայն հայության աջակցությամբ արագ վերացվել են դաժան պատերազմի հետքերը: Տարեցտարի զարգանում է տնտեսությունը, վերակառուցվում, իրենց տեսքն են բարեփոխում մեր քաղաքներն ու գյուղերը, պետության կողմից պատշաճ հոգ է տարվում բնակչության սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ: Առաջնահերթությունների թվում, երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում է մնում դպրոցաշինության խնդիրը: Այդ տեսակետից ուրախանալու քիչ առիթներ չենք ունեցել և ստեփանակերտցիներս: Գրեթե ամեն տարի մայրաքաղաքում աշակերտների առաջ իր դռներն է բացում նորակառույց մի դպրոց՝ ժամանակակից ամենահարմարավետ պայմաններով, ուր Արցախի վաղվա ապագան է դաստիարակվում՝ սերտելով ավագների պատգամներն ու դասերը... Հավատացած ենք, որ ձեռք բերված հարուստ գիտելիքները, հայեցի կրթությունն ու ազգային արժեքների ոգով դաստիարակությունը կնպաստեն սեփական ունակությունների ու կարողությունների դրսևորմանը: Իսկ ամենևին էլ գաղտնիք չէ, որ դպրոցն ավարտող աշակերտը վաղն ավագ սերնդի շարքերը համալրող մեր ապագա մանկավարժն է ու գիտնականը, բժիշկն ու տնտեսագետը, շինարարը, գրողն ու արվեստագետը, ովքեր պիտի ավելի շենացնեն և զորացնեն մեր երկիրը, այն դարձնեն առավել ծաղկուն ու բարգավաճ:

Սիրելի ստեփանակերտցիներ

Կրկին շնորհավորում եմ հիշարժան տոների առթիվ: Մաղթում եմ հաջողություններ, խաղաղ ու անամպ երկինք, երջանկություն: